ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ

Մխիթար Սեբաստացուն և իր հիմնադրած Մխիթարյան միաբանության գիտակրթական, հրատարակչական, թարգմանչական ու քարտեզագրական գործունեությանը նվիրված մեծ թվով ուսումնասիրություններ կան՝ մենագրություններ, հոդվածներ, գիտաժողովների նյութերի ժողովածուներ[1]: Մխիթարյաններին արևելահայ իրականության մեջ անդրադարձել են Ս. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Գ. Արծրունին, Ռաֆֆին, Լեոն, Ա. Երիցյանը, Ղ. Աղայանը, Մ. Աբեղյանը, Ա. Տեր-Պողոսյանը, Ռ. Գաբրիելյանը, Թ. Հակոբյանը, Հ. Ստեփանյանը, Բ. Թումանյանը և ուրիշներ:

Նշված մտավորականներից ժամանակագրական առումով առաջնությունը պետք է տալ Ստեփանոս Նազարյան (1812-1879) հրապարակախոսին, խմբագրին, լուսավորչին, փիլիսոփային և բանասիրության դոկտորին: Նա Մխիթարյաններին անդրադարձել է 1840-ականներին Կազանում: 1839 թ. հայոց լեզվի և գրականության նորաբաց ամբիոնի վարիչի պաշտոնի համար Կազանի համալսարանը հայտարարել էր մրցույթ: Ամբիոնի վարիչի պաշտոնն զբաղեցնելու համար դիմել էին Խ. Աբովյանը, Արզանով եղբայրները, Ն. Բերոյանը և ուրիշներ[2]: Ինչ-ինչ պատճառներով մրցույթը հետաձգվել էր[3]: 1842 թ. Ս. Նազարյանը՝ որպես հայտարարված մրցույթի հաղթող, Կազանի համալսարանում ստանձնեց հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պարտականություններն ու մինչև 1849 թ. աշխատեց հիշյալ պաշտոնում: Հենց այդ տարիներին էլ ռուսերենով Կազանում լույս տեսած երկու արժեքավոր մենագրություններում[4] հավուր պատշաճի ներկայացրել է հայ գրականության պատմությունը V դարից մինչև XIX դ. առաջին քառորդը:

---

[1] *Մխիթար Սեբաստացուն և Մխիթարյաններին առաջին անգամ անդրադարձողներից մեկը Մխիթարյան միաբանության երևելի անդամներից մեկն է՝ Ստեփանոս Գյուվեր Ագոնցը (1740–1824), 1800-ից՝ հիշյալ միաբանության աբբահայրը: 1810-ին Վենետիկում լույս է տեսել նրա «Պատմութիւն կենաց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ բարունապետի և աբբայի» աշխատությունը (տե՛ս նաև՝ Մխիթարեան Յոբելեան 1701–1901, Վենետիկ, 1901, Բ. Ս ա ր գ ի ս ե ա ն. Երկհարիւրամեա գրականական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905):*

[2] Э. А к о п я н. Армеведение в России. Ереван, 1988, с. 91.

[3] *Ռ. Ն ա ն ո ւ մ յ ա ն. Ստեփանոս Նազարյան, Երևան, 1978, էջ 275:*

[4] С. Н а з а р я н. Беглый взгляд на историю Гайканской литературы до конца XIII столетия. Казань, 1844; *ն ո ւ յ ն ի՝* Обозрение истории Гайканской письменности в новейшие времена. Казань, 1846.

Կազանի համալսարանում գիտամանկավարժական գործունեությունը չափազանց բեղմնավոր էր Ս. Նազարյանի համար: Նրա առաջին մտահոգությունը հիշյալ համալսարանի հիմնարար գրադարանը հայագիտական հրատարակություններով հարստացնելն էր, ինչպես նաև՝ Կազանում հայկական տպարան հիմնելու նպատակով հայերեն մայր տառեր հայթայթելը: 1843 թ. սեպտեմբերի 21-ին Ս. Նազարյանը դիմել է Վենետիկի Մխիթարյան միաբանության ականավոր հայագետ, երաժշտագետ, բնագետ և մանկավարժ Մինաս Բժշկյանին (1777–1867)՝ Կազանի համալսարանում հայագիտական արդյունավետ գործունեություն ծավալելու համար ուղարկել հայագիտական գրականություն, ինչպես նաև ցուցաբերել նյութական օժանդակություն[5]*:*

1846 թ. Ս. Նազարյանը հայ-պարսկական դպրության մագիստրոսի գիտական աստիճան ստանալու համար Կազանի համալսարանի գիտական խորհրդին է ներկայացրել «Տեսություն նորագույն ժամանակներում Հայկազյան մատենագրության պատմության» ուսումնասիրությունը: Սա, փաստորեն, ռուսերենով գրված հայ գրականության ամփոփ պատմությունը ներկայացնելու առաջին փորձն է: Ահա թե ինչպիսի առաջաբանով է սկսում իր այդ աշխատությունը Ս. Նազարյանը. «Ազգերը, ժամանակի և տարածության մեջ, ծագում, ծաղկում և ընկնում են կա՛մ վերջնականապես, կա՛մ թե մի քանի դար ժամանակով, մինչև որ մարդկության հանճարը, ավելի նպաստավոր հանգամանքների մեջ, վերածնվում է իր դարավոր դագաղից և վերանորոգված ուժերով գնում է այն ճանապարհով, որ նախագծել է նախախնամությունը երկրագնդի ցեղերի համար: Ազգերի կյանքի երևույթների այս անընդհատ տեղատվությունն ու մակընթացությունը, ինչպես մի մեծ հայելու մեջ, պարզ արտահայտվում է լեզուների և գրականությունների պատմությամբ, որոնք, ինչպես ազգային կեցության անփոփոխ հավատարիմ ուղեկիցներ, գնում են նրա հետ օրորոցից մինչև գերեզման»[6]*:*

Առաջաբանին հետևում է XIV–XVIII դարերում հայ մատենագրությանը նվիրված ընդհանուր ակնարկը: Ըստ Ս. Նազարյանի դիտարկումների, նշված ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթությունն անկում է ապրել: Եվ միայն գիտության ու կրթության հատուկենտ գործիչներ են նպաստել հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացմանը: Եվ դրանց մեջ, ըստ հեղինակի, առաջնության դափնին Մխիթար Սեբաստացունն է. «Հայոց գրականությունը XIV դարից ավելի ու ավելի թեքվում էր դեպի անկում: XVII դարում ազգի մի քանի ընտրյալներ՝ Բարսեղ Բիթլիսեցի, Հակոբ Էջմիածնեցի, Կոլոտ Կ. Պոլսեցի, զուր էին ճգնում վերականգնել այն: Ապագա ժամանակներին էր թողնված գրականության վերստին ծաղկման վկա լինելու իրողությունը: XVIII դարը պիտի դառնար ազգային կյանքի այդ բարեբախտ հեղափոխության արժանահիշատակ ժամանակը և Մխիթարը՝ այդ հեղափոխական գործիչն ու նախախնամության ընտրյալը»[7]*: Միանգամայն իրավացի էր Ս. Նազարյանն իր արտահայտած ընդհան-*

---

[5] *Ռ. Ն ա ն ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 60:*

[6] С. Н а з а р я н. Обозрение истории Гайканской письменности…, с. 3.

[7] *Նույն տեղում, էջ 72:*

բացումներում: Նշված երեք գործիչներից վերջինը՝ Կոլոտ Կ. Պոլսեցին, նույն ինքը Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին (1678–1741) է, որը Կ. Պոլսի հայոց պատրիարքն էր 1715 թվականից և, բնականաբար, XVIII և ոչ XVII դ. գործիչ է:

Ս. Նազարյանի ապրած ժամանակահատվածում արևելահայ մշակութային և ոչ մի գործիչ այդպիսի բարձր ու պատվավոր գնահատականի չէր արժանացրել Մխիթար Սեբաստացուն: Ս. Նազարյանն իրավացիորեն հերքել է շատերի կողմից գիտական շրջանառության մեջ դրված այն միտքը, թե իբր Մխիթար Սեբաստացին իր միաբանությունը Սուրբ Ղազար կղզում հիմնել է հայերին Հռոմի գիրկը նետելու և ազգը կաթոլիկ դարձնելու նպատակով: Ինչ խոսք, միաբանությունը հիմնելիս Մխիթար Սեբաստացին պարտավոր էր ընդունել կաթոլիկություն՝ Իտալիային պատկանող Սուրբ Ղազար կղզում բույն դնելու նպատակով: Սակայն դա չէր գիտության և մշակույթի այդ մեծ ռահվիրայի հիմնական ու վերջնական նպատակը: Շուրջ մեկուկես դար առաջ Ս. Նազարյանը մարգարեաբար գրել է. «Թողնենք կրոնական կողմը: Հայկական գրականության պատմությունը պիտի նայի Մխիթարյան միաբանությանը՝ որպես գիտական ակադեմիայի *(ընդգծումը մերն է.–* Ա. Փ.*), որի անդամները, ինչպես տրամադրում էին սահմանված կարգերը, պարտավոր էին զբաղվել գիտությունները մշակելով, փոխադարձաբար հաղորդելով մեկը մյուսին իրենց հետազոտությունների արդյունքը»[8]:*

Ս. Նազարյանի՝ Մխիթարյաններին տված հիշյալ բնութագրման մեջ կա հույժ կարևոր մի արտահայտություն: Մխիթարյան միաբանությունը նա առաջին անգամ ներկայացնում է որպես «գիտական ակադեմիա»: Եվ սա այն դեպքում, երբ այդ տողերը գրելուց շուրջ երեք տասնամյակ առաջ, 1810 թ. օգոստոսի 17-ին Նապոլեոն Բոնապարտի հրամանով, ի տարբերություն Իտալիայում գործող կրոնական այլ միաբանությունների, Սուրբ Ղազար կղզում հաստատված հայ միաբանությունը մնացել է նույն վիճակում: Մինչև այդ հրամանն արձակելը, Ֆրանսիայի ինքնակալն ի մոտո ծանոթացել էր Մխիթարյանների գիտակրթական գործունեությանը. «Գործին ծանոթանալով՝ նա հասկացել է, որ հայկական այս միաբանությունը հիրավի բացառություն է նախ նրանով, որ շահախնդիր բնույթ չունի, իր միջոցները չի ստանում Եվրոպայի ժողովրդից: Երկրորդը. Մխիթարյան ուխտն առավել գիտական, քան կրոնական կազմակերպություն է»[9]: Մի շատ կարևոր հանգամանք ևս: Նապոլեոն Բոնապարտի հրամանագրում չկա «ակադեմիա» բառը: Սակայն Մխիթարյանները, և ոչ միայն նրանք, պատմական այդ փաստաթղթի հրապարակման օրվանից սկսած Մխիթարյան միաբանությունը կոչում են ակադեմիական:

Ս. Նազարյանը չի բավարարվել Մխիթարյան միաբանությունը «ակադեմիա» բնորոշելով: Նա Մխիթար Սեբաստացուն՝ որպես այդ միաբանության հիմնադրի, առաջին անգամ համարել է երկրորդ Մեսրոպ Մաշտոց. «Մխիթարյանների ակադեմիայի երևան գալը հայոց մտավոր կյանքի ամենանշանավոր դեպքն է *(ընդգծումը մերն է.–* Ա. Փ.*): Հայ ժողովուրդը մինչ այդ ընկղմված էր խորին տգի-*

---

[8] Հ. Ն ա զ ա ր յ ա ն. *Նույն տեղում, էջ 75:*

[9] *Ա. Բ ա խ չ ի ն յ ա ն. Նապոլեոնը և հայերը, Երևան, 2003, էջ 61-62:*

տության մեջ, իսկ նրա լեզուն՝ կատարյալ բարբարոսական դրության մեջ: Մխիթարը, որ իրավացի կերպով անվանվում է հայերի նոր լուսավորիչ և երկրորդ Մեսրոպ, իր միաբանության հիմնադրությամբ մի անխորտակելի պատվար կանգնեցրեց գրական խանգարումների դեմ»[10]:

XIX դ. 40-ականներին գրված այս տողերում դույզն-ինչ չափազանցություն չկա, քանզի հենց այդ ժամանակներում Վենետիկի Մխիթարյան հայրերից ոմանց անունը հայտնի էր Եվրոպայի շատ ու շատ ակադեմիաներում, գիտական ընկերություններում: Ավելին, նրանք նաև նշված հաստատությունների կողմից պատվավոր ու ծանրակշիռ տիտղոսների արժանացած հոգևոր գործիչներ էին: Այսպես. Գաբրիել Ավետիքյանը (1751-1827) Հռոմի Սապիենզ ակադեմիայի անդամ էր 1807 թվականից: 1825-ից Հռոմի հնագիտական ակադեմիայի անդամներ էին Մկրտիչ Ավգերյանը (1762–1854) և Քերովբե Ազնավուրյանը (1791–1843): 1810-ից Մեսրոպ Աղաչրաղյանը (1769–1845) Ֆրանսիայի հանքաբանության կայսերական խորհրդի անդամ էր: 1815 թ. Իգնատիոս Փափազյանը (1764–1852) Հռոմի գեղարվեստական ակադեմիայի անդամ էր[11]:

Հավելենք նաև, որ XIX դ. առաջին կեսին Մխիթարյանների հիմնադրած միաբանությունը գիտական, մշակութային ու կրթական միակ կենտրոնն էր, որ հիմնադրման առաջին իսկ օրվանից, հավատարիմ մնալով Մխիթար Սեբաստացու սկզբնավորած գործին, միաժամանակ դարձավ յուրօրինակ մի ոսպնյակ, որում բեկվեց եվրոպական գիտության լույսը՝ իր անդրադարձներն ուղղելով դեպի հայկական գաղթօջախները և Հայաստան:

Ս. Նազարյանը հիշյալ աշխատությունում անդրադարձել է Մխիթարյան միաբանության մի շարք անդամների գրական, գիտական և մանկավարժական գործունեությանը: Դրանցից առավել հետաքրքիր է միաբանության բազմաշխատ գործիչներից մեկի՝ Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» հանրագիտարանին տված նրա գնահատականը: Նշենք, որ Մ. Բժշկյանի՝ 380 էջանոց աշխատությունը գրաբար լույս է տեսել Վենետիկում: Այն հավուր պատշաճի գնահատված և մեկնաբանված չէր մինչև 1990-ականների սկիզբն անգամ Մխիթարյան միաբանության հայրերի կողմից[12]:

Ահա թե ինչպես է գնահատել Ս. Նազարյանը Մ. Բժշկյանի հիշյալ աշխատությունը. «Մ. Բժշկյանի «Ճեմարան գիտելեացը» գիտություններին նվիրված համառոտ մի հանրագիտարան է: Այն գրված է չափածո քառատողերի ձևով, որոնք ուղեկցվում են գիտական ծանոթագրություններով: Տպագրված է 1810 թվականին և վերահրատարակված է 1818-ին»[13]: Նշենք, սակայն, որ Մ. Բժշկյանի

---

[10] С. Н а з а р я н. Обозрение истории Гайканской письменности…, с. 76.

[11] *Հ. Դ ա վ թ յ ա ն. Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Երևան 1964, էջ 20, Բ. Ս ա ր գ հ ա ս ե ա ն. նշվ. աշխ., էջ 347-352:*

[12] *Մ. Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» հանրագիտարանի մասին տե՛ս մեր ուսումնասիրությունները. Ա. Փ ա շ ա յ ա ն. XIX դարի քիմիան հայ բնագետների աշխատություններում, Երևան, 1992, էջ 12-24, ն ո ւ յ ն ի՝ Հայր Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» հանրագիտարանը.– «Բազմավեպ», 2004, հ. 1-4, էջ 462-475:*

[13] С. Н а з а р я н. Обозрение истории Гайканской письменности…, с. 85.

«Ճեմարան գիտելեացը» առաջին անգամ հրատարակվել է ոչ թե 1810-ին, ինչպես նշել է Ս. Նազարյանը, այլ՝ 1815-ին:

Ս. Նազարյանը նամակագրություն է ունեցել Մ. Բժշկյանի հետ: Եվ սա ամենևին էլ պատահականություն չէ: Մ. Բժշկյանը Մխիթարյան միաբանության այն եզակի վարդապետերից էր, որ ոչ միայն տիրապետում էր ռուսերենին, այլև հեղինակ է «Ռուսերեն-հայերեն քերականություն» աշխատությանը: Տաղանդաշատ այս վարդապետը երկար տարիներ գիտամանկավարժական բեղմնավոր գործունեություն է ծավալել Ռուսաստանում ու գնահատվել է ըստ արժանվույն. «1845 թվականին Սնաստոպոլում Մ. Բժշկյանը, ներկայանալով Նիկոլայ I թագավորին, նրան է նվիրել իր «Բազմալեզուեան քերականութիւնը»՝ ստանալով թագավորից ոսկե մեդալ: Ավելի ուշ, Հայր Մ. Բժշկյանը «Ռուսերեն-հայերէն քերականութիւնը» նվիրել է թագաժառանգ Ալեքսանդրին՝ ստանալով վերջինից ականակուռ մատանի»[14]:

Մ. Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց»-ի՝ Ս. Նազարյանի տված գնահատականը Մխիթարյան միաբանության բնագիտական ժառանգությունը գնահատելու և արժեքավորելու առաջին փորձն է:

Բացի Մ. Բժշկյանից Ս. Նազարյանն անդրադարձել է նաև Մխիթարյան միաբանության ավագագույն անդամներ Մկրտիչ Անանյանին, Իգնատիոս Փափազյանին, Սուքիաս Աղամալյանին, Վրթանես Ասկերյանին, Միքայել Չամչյանին, Գյուվեր Ագոնցին, Խաչատուր Սյուրմելյանին, Գաբրիել Ավետիքյանին, Մանվել Ջախջախյանին: Ս. Նազարյանի այս ուսումնասիրությունը, հիրավի, նոր և լուսավոր գաղափարներ սերմանեց մեր մտավոր մշակույթի արգավանդ հողում: Միանգամայն իրավացի է Լեոն՝ Ս. Նազարյանի գնահատման հարցում. «Ստեփանոս Նազարյանը մարմնացրեց մի նոր, մեզանում դեռ չտեսնված տիպ, հասարակությունը առաջնորդող գրողի տիպը: Նրանով գործիչը հաստատուն, պատվավոր տեղ գրավեց մեր հասարակության մեջ: Տանջվեց նա, երկար մաքառեց, բայց կարողացավ հոյակապ շենքի հիմքերը դնել քարի վրա: Այդ շենքը նոր գրականությունն էր, հասարակական գրականությունը, այն որ կրթում է, սովորեցնում, խրատում, որ գաղափարներ է ցույց տալիս, որ ղեկավարում է ձգտումները՝ բաց անելով նրանց առջև լայն հորիզոններ»[15]:

Այո, XIX դ. առաջին կեսին Ս. Նազարյանն արևելահայ իրականության մեջ Մխիթարյանների գիտակրթական վաստակը գնահատողներից առաջինը եղավ: Կարճ ժամանակ անց Մխիթարյան միաբանության գնահատման նրա բացած շավղով արևելահայ իրականության մեջ ընթացան Միքայել Նալբանդյանը, Ալեքսանդր Երիցյանը և ուրիշներ:

---

[14] *Ա. Փ ա շ ա յ ա ն. Հայր Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» հանրագիտարանը, էջ 463:*

[15] *Լ. ե ո. Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1987, էջ 204:*

КОНГРЕГАЦИЯ МХИТАРИСТОВ В ОЦЕНКЕ СТЕПАНОСА НАЗАРЯНА

АСАТУР ПАШАЯН

Р е з ю м е

Публицист, философ, редактор, просветитель, доктор филологии Степанос Назарян (1812-1879) в 1846 г. в Казани издал книгу “Обозрение истории Гайканской письменности в новейшие времена”. Автор рассматривает историю армянской письменности в XIV-XVIII вв. Это первая книга в среде восточных армян, где досконально дается обзор деятельности конгрегации мхитаристов со времени ее основания на острове св. Лазаря до начала XVIII в. Особенно важен тот факт, что впервые конгрегация рассматривается как академическое учреждение, а основатель ее Мхитар Себастаци как второй армянин в области культуры и науки после Месропа Маштоца. В книге С. Назаряна даются краткие сведения о некоторых членах конгрегации: Минасе Бжшкяне, Мкртиче Ананяне, Сукиасе Агамаляне, Вртанесе Аскеряне, Хачатуре Сюрмеляне, Манвеле Джахджахяне, Гювере Агонце, Игнатиосе Папазяне, Габриеле Аветикяне, Микаеле Чамчянце и др.

MKHITARIST CONGREGATION IN STEPANOS NAZARYAN'S ESTIMATION

ASATUR PASHAYAN

S u m m a r y

Publicist, philosopher, editor, enlightener, literary man Stepanos Nazaryan (1812-1879) published the monograph "The Theory of Haykazyan Bibliography History in Our Days" in 1846 in Kazan. Armenian bibliographic history problems in the 14th–18th centuries are discussed. That is the first book in East-Armenian history, where Mkhitarist Congregation activities are thorougly discussed from its foundation day to the beginning of the 18th century. The fact is especially important, that for the first time Mkhitarist Congregation is represented as an academic establishment, the founder Mkhitar Sebastatsi is the second Armenian after Mesrop Mashtots in the scientific and cultural fields. Short biographies of Mkhitarist Congregation numerous figures - Minas Bzhshkyan, Mkrtich Ananyan, Sukias Aghamalyan, Vrtanes Askeryan, Khachatur Syurmelyan, Manvel Jakhjakhyan, Gyuver Agonts, Ignatios Papazyan, Gabriel Avetikyan, Mikayel Chamchyants and others are brought in the book.